



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2017թ. ապրիլի 7

N 82 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի թիվ 546-Ն որոշման պահանջները՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ /61-2.1-2/ Աշոտ Դավայանին և գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ /61-2.1-3/ Յուրիկ Ազատյանին 2017 թվականի հոկտեմբերի 2-ից հոկտեմբերի 13-ը գործուղել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի N 1009-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացներին:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ /61-2.2-28/ Սարգիս Մուրադյանին 2017 թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 6-ը գործուղել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 21-ի N 1093-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրով Հայաստանի պետական կառավարման ակադեմիայի կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացներին:

Գ. ԳՅՈՂԱԼՅԱՆ